



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. երկրորդ եռամսյակում /վերլուծություն/

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 31377 գործարքներ, որոնց քանակը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 5.8%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 7.5%-ով:

2006թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13197 օտարման գործարքների 86.0%-ը կազմել են առուվաճառքները, 13.2%-ը՝ նվիրատվությունները և 1.0%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 38.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. երկրորդ եռամսյակում, 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 21.2%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 28.6%-ով: 2006թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 4274 առուվաճառքի գործարքների 35.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 5.5%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 27.8%-ով:

2006թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. երկրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		երկրորդ եռամսյակ 2005թ.	երկրորդ եռամսյակ 2006թ.	առաջին եռամսյակ 2006թ.
Կենտրոն	157500-540100	271000	364200	358200
Արաբկիր	112500-405100	229000	288900	278100
Քանաքեռ-Զեյթուն	90000-270100	139000	174500	169600
Նոր-Նորք	90000-225100	128200	162800	158900
Ավան	99000-180000	119200	144700	140700
Էրեբունի	90000-225100	112800	143100	137900
Շենգավիթ	90000-202500	136400	173300	171500
Դավթաշեն	97700-225100	138700	178400	175300
Աջափնյակ	90000-225100	133500	163000	159900
Մալաթիա-Սեբաստիա	90000-202500	130000	160300	156100
Նուբարաշեն	58500-135000	64000	106100	99100
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	58500-540100	145600	187200	182300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. երկրորդ եռամսյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 2.7%, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 28.6%:

2006թ. երկրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2006թ. երկրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1334 բնակարաններ, որոնց քանակը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 15.1%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 8.2%-ով:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների

առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. երկրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			երկրորդ եռամսյակ 2005թ.	երկրորդ եռամսյակ 2006թ.	առաջին եռամսյակ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	36000-75500	43500	59400	54400
	Ապարան	13500-39500	20000	25600	24200
	Թալին	11300-42200	19300	23000	23000
Արարատ	Արտաշատ	24800-66600	34000	44900	42400
	Մասիս	36000-71100	38900	53500	52900
	Վեդի	22500-46600	20300	37000	36300
	Արարատ	20300-53300	25100	39200	38300
Արմավիր	Վաղարշապատ	49500-111000	68300	77900	76500
	Արմավիր	27000-66600	39200	51300	47500
	Մեծամոր	18000-48900	21000	33300	30300
Գեղարքունիք	Սևան	18000-44400	22100	32500	32300
	Գավառ	13500-40000	18100	24600	23400
	Մարտունի	22500-67500	21300	38300	37100
	Վարդենիս	9000-37800	10900	19800	19600
	Ճամբարակ	5900-31100	9100	13100	11600
Լոռի	Վանաձոր	27000-88800	34900	46700	43300
	Ստեփանավան	15800-42200	20800	24100	23100
	Սյիտակ	18000-48900	22700	32700	28400
	Ալավերդի	9000-35500	14800	20100	19000
	Տաշիր	11300-33300	18200	19900	19900
	Թումանյան	4100-11300	5000	5200	5200
	Շամլուղ	2300-8300	2700	2800	2800
	Ախթալա	6800-16000	10200	10300	10300
Կոտայք	Աբովյան	57700-111000	64700	88500	83400
	Նոր Հաճն	40500-75500	44300	59600	58000
	Բյուրեղավան	22500-57700	31400	42000	38900
	Եղվարդ	31500-66600	38500	55000	52500
	Հրազդան	20300-48900	26100	34400	34400
	Ծաղկաձոր	18000-88800	50800	70800	65000
	Չարենցավան	24800-48900	28300	38600	37400
Շիրակ	Գյումրի	27000-88800	37800	46600	45400
	Արթիկ	15800-42200	20000	29600	27000
	Մարալիկ	8100-35500	15700	21700	21700
Սյունիք	Գորիս	22200-66600	33300	51100	47700
	Կապան	22500-46600	26200	38900	37100
	Սիսիան	18000-48900	23600	32200	29700
	Մեղրի	13500-42200	19100	26100	24200
	Ագարակ	9000-31100	15600	19300	18300
	Քաջարան	9000-40000	12200	23800	22400
	Դաստակերտ	4500-11300	6300	6400	6400
Վայոց Ձոր	Վայք	13500-48900	22400	33500	31200
	Եղեգնաձոր	24800-66600	34300	51800	47200
	Ջերմուկ	36000-88800	37600	59100	54900
Տավուշ	Դիլիջան	18000-57700	28600	40800	37000

	Իջևան	27000-72000	33000	48700	45500
	Բերդ	18000-45000	23800	29400	26800
	Նոյեմբերյան	9000-22500	12400	15800	14700

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 5.6%, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 38.5%:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի ամսական փոփոխման շարժն ունի աճի միտում:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1309 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 321, մյուս մարզերում միասին վերցրած՝ 988: 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 9.6%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է 4.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ աճել 15.3%-ով: 2006թ. առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.9%-ով, ընդ որում Երևանում՝ 18.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ մնացել անփոփոխ:

2006թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. երկրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		երկրորդ եռամսյակ 2005թ.	երկրորդ եռամսյակ 2006թ.	առաջին եռամսյակ 2006թ.
Կենտրոն	135000-900200	297300	380300	366200
Արաբկիր	90000-450100	237100	293700	288400
Քանաքեռ-Զեյթուն	67500-270100	142100	177600	172300
Նորք-Մարաշ	90000-450100	168900	184800	184600
Ավան	90000-360100	122100	147400	145100
Էրեբունի	67500-225100	115200	146100	142800
Շենգավիթ	67500-202500	138700	175600	174700
Դավթաշեն	90000-405100	144300	181000	177900
Աջափնյակ	67500-270100	137300	165300	162800
Մալաթիա-Սեբաստիա	67500-405100	134200	163200	159200
Նուբարաշեն	40500-135000	66500	107800	101500
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	40500-900200	154900	193000	188700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 2.3%, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 24.6%:

2006թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի փոփոխման շարժն ունի աճի միտում:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. երկրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			2005թ. երկրորդ եռամսյակ	2006թ. երկրորդ եռամսյակ	2006թ. առաջին եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	27000-81000	46000	63600	55900
	Ապարան	13500-36000	20800	27100	25700
	Թալին	13500-36000	20300	24300	24300
Արարատ	Արտաշատ	22500-62200	35000	46200	43900
	Մասիս	25000-62200	39800	54600	54000
	Վեդի	22500-48900	22700	38300	37300
	Արարատ	22500-53300	26200	40400	39400
Արմավիր	Վաղարշապատ	36000-111000	69300	79300	77600
	Արմավիր	22500-67500	40000	52900	48600
Գեղարքունիք	Սևան	18000-53300	23200	38200	38200
	Գավառ	9000-37800	19400	25900	24700
	Մարտունի	22200-53300	22600	39500	38600
	Վարդենիս	9000-31500	12400	21500	21500
	Ճամբարակ	4500-24400	10900	14500	13300
Լոռի	Վանաձոր	23200-92800	36200	48000	44700
	Ստեփանավան	13500-40000	26200	26800	26800
	Սպիտակ	17800-44400	23500	33900	30200
	Ալավերդի	9000-31500	16000	21600	20500
	Տաշիր	9000-31500	19300	21400	21400
	Թումանյան	4500-18000	6400	6900	6900
	Շամլուղ	2300-13500	4000	4300	4300
	Ախթալա	9000-22500	11000	11900	11900
Կոտայք	Աբովյան	31500-111000	65600	90000	85500
	Նոր Հաճն	22200-76500	45400	60600	59300
	Բյուրեղավան	22200-66600	32300	43200	40100
	Եղվարդ	22500-71100	39500	56100	53400
	Հրազդան	18000-53300	27700	35900	35500
	Ծաղկաձոր	36000-112500	53700	72200	65800
	Չարենցավան	18000-57700	29600	39500	38700
Շիրակ	Գյումրի	28200-93800	42300	48000	47400
	Արթիկ	13300-40500	20900	30800	28500
	Մարալիկ	13500-40000	16500	23500	23500
Սյունիք	Գորիս	18000-79900	34100	52200	49200
	Կապան	17800-66600	27200	40000	37900
	Միսիան	17800-44400	23600	33400	30900
	Մեղրի	13500-40000	19900	27300	25600

	Ագարակ	13300-36000	16400	20800	20400
	Դաստակերտ	4500-18000	7500	8700	8700
Վայոց Ձոր	Վայք	17800-44400	23300	34700	32800
	Եղեգնաձոր	22200-71100	35300	53100	48400
	Ջերմուկ	17800-48900	27700	35300	33300
Տավուշ	Դիլիջան	26600-66600	32000	41800	37800
	Իջևան	22200-66600	33700	49900	45900
	Բերդ	13500-44400	24500	30700	27800
	Նոյեմբերյան	9000-31500	13900	16900	15700

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 5.2 %, իսկ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 35.5%:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի փոփոխման շարժն ունի աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 5001 միավոր /8488.87 հա/ հողեր, որից Երևանում՝ 598 միավոր /146.24 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 368 միավոր /116.06 հա/ հողեր, որից Երևանում՝ 250 միավոր /102.62 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2281 միավոր /8124.55 հա/: Երևանում գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1792 միավոր /190.18 հա/, որից Երևանում՝ 336 միավոր /49.08 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 816 միավոր /97.41 հա/, որից Երևանում՝ 219 միավոր /51.44 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 99 միավոր /59.37 հա/, որից Երևանում՝ 43 միավոր /45.72 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 11 միավոր /6.36 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- ջրային հողեր՝ 2 միավոր /11.00 հա/: Երևանում ջրային հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 4647 միավորի /8336.00 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 567 միավոր /143.40 հա/, նվիրատվության գործարքներ՝ 312 միավոր /135.85 հա/, որից Երևանում՝ 19 միավոր /1.96 հա/ և փոխանակության գործարքներ՝ 42 միավոր /17.02 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /0.88 հա/:

Հանրապետությունում 2006թ. երկրորդ եռամսյակում, 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 33.9%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 9.9%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 27.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 5.8 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ 9 գործարքով և ջրային հողերի նկատմամբ՝ 2 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 6013.84 հա, որից 5992.94 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 34.8%-ը կամ 1616

գործարքներ /3979.96 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 265 գործարքներ /105.51 հա/, իսկ 65.2%-ը կամ 3031 միավորը /4356.04 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 302 միավոր /37.89 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների և ջրային հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	42	45.64	64	21.65	159	38.22	0	0.00	0	0.00	246	25.04	56	12.85
Արագածոտն	155	592.10	0	0.00	17	2.08	29	1.69	155	182.29	3	0.07	155	15.21	9	2.24
Արարատ	91	227.45	12	1.99	97	9.11	71	2.67	281	243.89	3	0.83	221	19.53	8	0.120
Արմավիր	214	2634.64	3	1.45	6	0.58	63	0.95	395	3358.30	1	0.01	173	15.43	32	2.47
Գեղարքունիք	0	0.00	1	0.20	16	2.28	32	3.90	34	44.29	0	0.00	28	3.22	11	2.75
Լոռի	5	11.00	0	0.00	0	0.00	17	0.77	33	29.70	0	0.00	21	2.89	12	0.18
Կոտայք	92	284.17	12	4.52	19	2.04	92	16.33	360	146.80	5	1.34	429	44.55	13	2.21
Շիրակ	7	5.86	3	0.32	67	2.31	86	2.14	52	58.41	0	0.00	15	2.23	4	0.04
Սյունիք	0	0.00	8	2.42	2	0.24	40	1.84	38	45.34	1	0.05	7	0.55	10	0.16
Վայոց Ձոր	11	9.62	3	0.35	0	0.00	48	3.02	35	40.46	0	0.00	13	1.74	2	0.01
Տավուշ	12	30.93	1	0.11	4	0.80	12	1.07	130	44.45	0	0.00	31	2.48	1	0.06
Ընդամենը	587	3795.77	85	57.00	292	41.09	649	72.60	1513	4193.93	13	2.30	1339	132.87	158	23.09

Ստորև ներկայացվում է 2006թ. երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների և ջրային հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Ուղղակի վաճառք</i>								<i>Աճուրդ վաճառք</i>									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողերի		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	254	103.21	42	45.64	56	20.47	156	37.10	11	2.32	0	0.00	0	0.00	8	1.19	3	1.13
Արագածոտն	4	0.03	0	0.00	0	0.00	4	0.03	197	595.83	155	592.10	0	0.00	17	2.08	25	1.65
Արարատ	40	1.86	8	0.49	1	0.33	31	1.04	231	239.35	91	227.44	4	1.50	96	8.78	40	1.63
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	286	2637.63	214	2634.64	3	1.45	6	0.58	63	0.95
Գեղարքունիք	3	1.16	0	0.00	0	0.00	3	1.16	46	5.22	0	0.00	1	0.20	16	2.28	29	2.74
Լոռի	8	0.43	0	0.00	0	0.00	8	0.43	14	11.33	5	11.00	0	0.00	0	0.00	9	0.33
Կոտայք	19	3.52	7	2.52	0	0.00	12	1.01	196	303.53	92	284.17	5	2.00	19	2.04	80	15.32
Շիրակ	5	0.21	0	0.00	1	0.05	4	0.16	157	10.43	7	5.86	3	0.32	66	2.27	81	1.98
Սյունիք	16	3.25	5	1.99	0	0.00	11	1.26	34	1.26	0	0.00	3	0.43	2	0.24	29	0.59
Վայոց Ձոր	18	2.68	3	0.35	0	0.00	15	2.33	41	7.16	8	6.47	0	0.00	0	0.00	33	0.69

Տավուշ	13	1.67	1	0.11	4	0.80	8	0.76	16	31.24	12	30.93	0	0.00	0	0.00	4	0.31
Ընդամենը	380	118.02	66	51.10	62	21.65	252	45.28	1229	3845.30	584	3792.61	19	5.90	230	19.46	396	27.32

Հանրապետությունում 2006թ. երկրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ընդլայնման նպատակով՝ ուղղակի վաճառքի 3 գործարքներ /3.15 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2006թ. երկրորդ եռամսյակում, 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 51.4%: Ընդ որում Երևանում նվազել է 67.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 56.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 28.3%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ աճել է շուրջ 56.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 5.8 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 2.7 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ աճել է 1 գործարքով և ջրային հողերի նկատմամբ՝ աճել է 2 գործարքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. երկրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	129	257.87	4.4	6630.2	605.6	106	127.79	362.2	6772.5	2158.7
Ապարան						5	6.00	90.6	767.6	304.2
Թալին	26	334.23	33.7	825.8	135.4	38	41.24	90.6	758.5	299.8
Ծաղկահովիտ						4	6.59	77.0	948.2	140.2
Արարատի մարզ										
Արտաշատ	31	38.46	67.4	5966.9	1192.3	145	184.00	335.1	5418.0	1133.0
Մասիս	29	109.88	11.0	1034.9	259.7	57	24.53	181.1	6772.5	1507.9
Վեդի	31	79.10	25.2	254.6	83.0	71	33.04	203.8	4515.0	925.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	41	308.96	37.4	1550.2	459.0	58	89.29	294.3	4063.5	733.5
Բաղրամյան	140	2228.89	6.3	244.1	36.7	150	2896.98	90.6	677.3	461.2
Վաղարշապատ	33	96.79	31.4	1113.0	333.4	180	365.57	443.7	9030.0	1269.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	0.96	190.2	496.7	311.3
Ճամբարակ						15	12.85	45.3	541.8	129.4
Մարտունի								45.3	1806.0	441.5
Սևան								45.3	451.5	174.5
Վարդենիս						16	30.49	27.2	532.8	190.7
Լոռու մարզ										
Ալավերդի						15	14.92	163.0	2483.3	334.8
Գուգարք						4	2.74	226.4	2709.0	858.1
Սպիտակ						2	0.28	226.4	1490.0	469.7
Ստեփանավան	5	11.00	94.7	431.3	290.4	12	11.76	90.6	2257.5	312.2

Տաշիր								45.3	451.5	186.1
Կոտայքի մարզ										
Արմավյան	37	63.03	47.2	854.2	323.6	164	46.77	271.7	11287.5	2849.5
Եղվարդ	13	22.13	48.4	2019.8	514.2	172	90.81	172.1	11287.5	1970.7
Հրազդան	42	199.00	59.5	841.6	262.4	20	7.53	113.2	2709.0	687.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	2.90	229.3	229.3	229.3	15	19.37	249.0	1693.1	379.7
Ամասիա						5	7.30	36.2	237.0	96.1
Անի						5	4.23	108.7	361.2	194.2
Աշոցք						13	18.09	45.3	112.9	101.8
Արթիկ	6	2.96	105.6	832.4	486.4	14	9.41	63.4	1083.6	154.3
Սյունիքի մարզ										
Գորիս						9	16.52	90.6	722.4	286.4
Կապան								54.3	903.0	207.9
Մեղրի						5	1.07	181.1	1914.4	407.2
Սիսիան						24	27.76	45.3	677.3	163.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	3.17	35.9	305.5	103.3	20	29.71	117.7	2709.0	1171.2
Վայք	4	3.30	35.9	719.6	171.6	15	10.75	54.3	1535.1	458.2
Տավուշի մարզ										
Բերդ						34	8.26	45.3	903.0	307.5
Իջևան	5	1.48	397.7	553.4	479.7	5	1.64	240.0	1806.0	745.3
Նոյեմբերյան	7	29.45	207.0	1315.0	774.2	91	34.55	45.3	3765.5	427.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. երկրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	14	16389.0	73.6	2375.4	550.4	148	143570.0	113.2	3612.0	1937.1
Ապարան						2	2360.0	113.2	632.1	158.5
Թային	3	4404.0	116.7	117.8	117.3	2	3360.0	45.3	361.2	68.3
Ծաղկահովիտ						1	30.0	45.3	361.2	64.0
Արարատի մարզ										
Արտաշատ	40	41185.0	143.7	561.8	291.8	49	52221.0	135.8	2709.0	706.7
Մասիս	38	28607.0	193.8	664.8	520.5	124	96490.0	135.8	9030.0	917.1
Վեդի	18	18000.0	122.0	130.4	124.1	46	45098.0	113.2	993.3	516.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	2800.0	238.1	244.8	240.3	41	41348.0	135.8	2257.5	886.0
Բաղրամյան						1	1200.0	81.5	270.9	109.2
Վաղարշապատ	3	3000.0	632.0	632.0	632.0	129	110281.0	135.8	4515.0	1194.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	2800.0	90.3	96.9	92.5	6	5916.0	135.8	903.0	302.5

Ճամբարակ	12	20000.0	107.3	145.2	138.9	4	4560.0	45.3	135.5	72.7
Մարտունի						9	8625.0	90.6	451.5	176.1
Սևան						2	1965.0	90.6	903.0	117.8
Վարդենիս						7	11089.0	45.3	225.8	81.5
Լոռու մարզ										
Ալավերդի						3	7190.0	67.9	270.9	96.1
Գուգարք						7	6778.0	67.9	2347.8	486.5
Սպիտակ						4	4950.0	63.4	451.5	99.6
Ստեփանավան						6	8835.0	45.3	270.9	81.4
Տաշիր								45.3	135.5	61.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	4900.0	407.4	660.6	456.6	201	209694.0	135.8	6772.5	1429.7
Եղվարդ	14	14834.0	162.0	1620.7	808.0	201	208536.0	135.8	6772.5	1602.0
Հրազդան	1	700.0	500.8	500.8	500.8	26	25998.0	135.8	9030.0	1016.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	39	10668.0	568.1	2701.5	1445.7	6	5465.0	113.2	1535.1	263.2
Ամասիա								45.3	135.5	61.1
Անի						2	3510.0	67.9	180.6	84.3
Աշոցք						1	5370.0	40.8	135.5	54.5
Արթիկ	27	12006.0	56.8	2200.8	332.4	6	7931.5	67.9	925.6	122.1
Սյունիքի մարզ										
Գորիս						1	980.0	67.9	541.8	202.2
Կապան	2	2400.0	805.9	1666.9	1235.3			67.9	632.1	186.1
Մեղրի						4	2250.0	67.9	406.4	104.8
Սիսիան						2	2310.0	67.9	406.4	117.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						10	11320.0	67.9	1128.8	221.3
Վայք						3	6100.0	77.0	632.1	101.8
Տավուշի մարզ										
Բերդ						1	1320.0	45.3	632.1	77.1
Իջևան						24	18988.0	67.9	1354.5	325.9
Նոյեմբերյան						4	3725.0	45.3	632.1	100.3

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 2 գործարքներ 1.00 հա մակերեսով /Գեղարքունիքի մարզ/:

2006թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2328 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.4%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 36.0% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 27.1%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ աճել՝ 23.9%-ով:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 172 բնակարանների, 74 անհատական բնակելի տների, 767 հասարակական, 145 արտադրական նշանակության օբյեկտների, 1155 միավոր /8746.22 հա/ հողերի, 15 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2006թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 35 վարձակալության գործարքների քանակը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 58.8%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 57.3%-ով:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 8746.22 հա հողերից 12.64 հա վարձակալվել են Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված 8733.58

հա հողերի 98.4%-ը կամ 8589.92 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության, 21.59 հա բնակավայրերի, 8.54 հա արդյունաբերական օբյեկտների, 4.40 հա էներգետիկայի օբյեկտների, 69.83 հա ընդերքօգտագործման, 0.35 հա ջրային, 0.30 հա տրանսպորտի օբյեկտների, 38.64 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 2303.53 հա, որից 2300.88 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 5400.98 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. երկրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր /	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	17	1733.00	144	567.88
Արարատ	2	20.00	29	186.79
Արմավիր	0	0.00	30	521.79
Գեղարքունիք	25	1782.90	79	366.87
Լոռի	1	600.00	200	535.53
Կոտայք	6	698.00	63	321.11
Շիրակ	8	517.00	157	336.49
Սյունիք	0	0.00	58	161.18
Վայոց Ձոր	9	50.08	19	144.13
Տավուշ	0	0.00	14	47.19
Ընդամենը	68	5400.98	793	3188.96

2006թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3629 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 45.9%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 51.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.0%/, առանձնատների /19.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /14.3%/ և հողերի /10.5%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1928 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 56.7%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 58.8%-ով:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 872.06 հա մակերեսով հողեր, որից 6.12 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 97.4% կամ 849.08 հա-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 439.05 հա գյուղատնտեսական նշանակության: 2006թ. երկրորդ եռամսյակում գրավադրման գործարքների ամսական քանակների փոփոխման շարժն ունի աճի միտում:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 48 և 77 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցումներում կազմել է 0.4%: 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 81.2%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 5.0%-ով: 2006թ. երկրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքում՝ 37.6%: 2006թ. երկրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների ամսական քանակների փոփոխման շարժն ունի նվազման միտում:

2006թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 5604 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 4.5%-ով, իսկ 2006թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 16.9%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /40.3%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն